Սոցիալական Ապահովության Համարներ

Արդյո՞ք դուք ժամանակավորապես գտնվում եք Միացյալ Նահանգներում, որպեսզի հաճախեք քոլեջ, լեզվական, պրոֆտեխնիկական կամ ոչ համալսարանական դպրոց՝ ոչ ներգաղթային **F-1, M-1** կամ **J-1** ուսանողական դասակարգմամբ: Ձեր դպրոցը կարող է պահանջել ձեզանից ձեր Սոցիալական ապահովության (Social Security) համարը: Որոշ քոլեջներ եւ դպրոցներ օգտագործում են Սոցիալական ապահովության համարները որպես ուսանողի անձը հաստատող համարներ: Եթե դուք չունեք Սոցիալական ապահովության համար, քոլեջը կամ դպրոցը պետք է ի վիճակի լինեն ձեզ տրամադրելու անձը հաստատող մեկ այլ համար:

Սոցիալական ապահովության համարները սովորաբար տրվում են այն մարդկանց, ովքեր ունեն Միացյալ Նահագներում աշխատելու իրավունք: Սոցիալական ապահովության համարներն օգտագործվում են, որպեսզի ձեր աշխատավարձը հայտարարագրվի կառավարությանը եւ որոշվի ձեր իրավասությունը Սոցիալական ապահովության նպաստներ ստանալու նկատմամբ: Սոցիալական ապահովությունը չի տրամադրի ձեզ համար, որպեսզի դուք պարզապես ընդունվեք քոլեջ կամ ուսումնական հաստատություն:

Ես ինչ պետք է անեմ, որպեսզի աշխատեմ Միացյալ Նահանգներում

Եթէդուք ցանկանում եք աշխատել համալսարանում, դուք պետք է դիմեք ձեր դպրոցի միջազգային ուսանողների բաժնի պատասխանատու պաշտոնյային: Այդ պաշտոնյան ձեզ բացատրում է ձեր աշխատելու իրավունքները համալսարանում եւ տեղեկություն է տալիս աշխատանքների մասին: Ձեր դպրոցը նաեւ կարող է հովանաւորել համալսարանից դուրս որոշակի աշխատանք Հայրենիքի Ապահովության Գրասենյակի (Department of Homeland Security, DHS) կանոնների համեմատ: **Եթե ձեր դպրոցը ձեզ թույլատրել է աշխատելու համալսարանում կամ դրանից դուրս, եւ դուք Սոցիալական Ապահովության իրավասության այլ պահանջները լրացնում եք, որոնք նկարագրված են յաջորդ բաժնում, դուք կարող եք ստանալ Սոցիալական Ապահովության համար**:

Ես ինչպես եմ դիմում Սոցիալական ապահովության համար ստանալու համար

Առհասարակ, միայն DHS-ից աշխատելու թույլտվություն ստացած ոչ քաղաքացիները կարող են դիմել՝ սոցիալական ապահովության համար ստանալու: Խորհուրդ ենք տալիս նախքան դիմելը սպասել, մինչև Միացյալ Նահանգներ ձեր ժամանելու օրից լրանա առնվազն 10 օր: Բացի այդ, դիմելուց առաջ պետք է այդ մասին տեղյակ պահեք ձեր ուսումնական հաստատությանը: Վերը նշված գործողությունների կատարման դեպքում մենք հնարավորություն ենք ստանում Ներքին անվտանգության նախարարության (DHS) միջոցով ստուգելու ձեր ներգաղթի կարգավիճակը:

- Սոցիալական ապահովության համար ստանալու համար դիմելու նպատակով.
- Լրացրեք Սոցիալական Ապահովության քարտ ստանալու դիմումնագիրը (Ձեւաթուղթ SS-5-AM) եւ
- Ցույց տվեք մեզ բնագիր փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր.
  - — ներգաղթի կարգավիճակը՝ աշխատանքի թույլտվությամբ
  - — տարիքը և
  - — ինքնությունը
- Ներկայացուցեք ձեր լրացված դիմումնագիրը ու փաստաթղթերի բնագիր օրինակները ձեր տեղական Սոցիալական Ապահովության գրասենյակին:

Ներգաղթի կարգավիճակ

Ձեր ԱՄՆ ներգաղթի կարգավիճակը ապացուցելու համար դուք պետք է ցույց տաք մեզ ԱՄՆ ներգաղթի վավերական փաստաթուղթ I-94-ը՝ *Arrival/Departure Record (Ժամանման/Մեկնման Ցուցագիրը)* , որը ձեզ տրվել է Միացյալ Նահանգներ ժամանելու պահին: Եթէ դուք F-1 կամ M-1 դպրոցական ուսանող եք, դուք պետք է նաեւ մեզ ներկայացնեք ձեր I-20-ը՝ *Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status (Ուսանողի Ոչներգաղթային Կարգավիճակի Իրավասության Վկայականը)*: Եթե դուք J-1 փոխանակման կարգով ժամանած այցելու եք, ապա դուք պետք է ներկայացնեք ձեր DS-2019-ը՝ *Certificate of Eligibility for Exchange Visitor* (J-1) *Status (Փոխանակման կարգով ժամանած այցելուի կարգավիճակի իրավասության վկայականը)*:

Աշխատելու իրավունքը

Եթե դուք F-1 ուսանող եք եւ իրավասու եք աշխատելու քամպուսում, ապա դուք պետք է ներկայացնեք նամակ դպրոցի նշանակված ձեր պաշտոնյայից, որը.

- Հաստատում է ձեր անձը.
- Հաստատում է ձեր դպրոցի առկա կարգավիճակը.
- Հաստատում է ձեր գործատուին եւ ինչպիսի աշխատանք եք դուք կատարում կամ կատարելու:

Մենք նաեւ կարիք ունենք տեսնելու այդ զբաղվածության ապացույցը, ինչպիսին է վերջին վճարման ստացականը կամ նամակ ձեր գործատուից: Այդ նամակը պետք է ստորագրված եւ թվագրված լինի ձեր ղեկավարի կողմից: Նամակում պետք է նկարագրվի.

- Ձեր աշխատանքը.
- Ձեր զբաղվածությունը սկսվելու ամիսը, ամսաթիվը եւ տարեթիվը.
- Աշխատելու ժամաքանակը, որով դուք աշխատում կամ աշխատելու եք եւ

(շրջել)

- Ձեր ղեկավարի անունը, ազգանունը եւ հեռախոսահամարը:

Եթե դուք F-1 ուսանող եք, որին թույլատրված է աշխատել ուսումնական պլանով պրակտիկ ուսուցման (CPT) մեջ, ապա դուք պետք է մեզ տրամադրեք ձեր Ձեւաթուղթ I-20-ը զբաղվածության էջով (էջ 3)՝ լրացված եւ ստորագրված ձեր դպրոցի նշանակված ուսումնական պաշտոնյայի կողմից:

Եթե դուք F-1 կամ M-1 ուսանող եք և DHS-ից աշխատանքի թույլտվություն ունեք (ձև I-766), ապա պետք է ներկայացնեք այն:

Եթե դուք J-1 ուսանող եք, ուսանող-պրակտիկանտ կամ միջազգային այցելու, ապա պետք է նամակ ներկայացնեք ձեր հովանավորից: Նամակը պետք է լինի հովանավորի բլանկի վրա և ունենա բնօրինակ ստորագրություն, որով ձեզ թույլատրվում է աշխատել:Մենք չենք կարող ընթացք տալ ձեր դիմում-հայտարարագրին եթե.

- Քամպուսում կամ CPT աշխատանքը սկսվում է ձեր դիմում-հայտարարագրի ամսաթվից ավելի քան 30 օր հետո. կամ
- DHS-ից ստացած Ձեր աշխատանքի թույլտվությունում (ձև I-766) նշված աշխատանքի առաջին օրը գալիք ամսաթիվ է:

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք ձեր օտարերկրյա ծննդյան վկայականը, եթե այն առկա է կամ եթե այն կարող եք ձեռք բերել 10 աշխատանքային օրվա ընթացքում: Այլ դեպքում՝ մենք կարող ենք որպես ձեր տարիքի վկայություն հաշվի առնել այլ փաստաթղթեր, օրինակ՝ ձեր անձնագիրը կամ DHS-ի կողմից տրված փաստաթուղթը:

Ինքնության հաստատումը

Որպես ինքնության հաստատում մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր անունը, ազգանունը, ինքնությունը հաստատող տեղեկատվությունը եւ ցանկալի է, որ այն ունենա վերջերս հանված լուսանկար: Հասարակական ապահովությունը կպահանջի, որ ցույց տաք ԱՄՆ ներգաղթի ձեր առկա փաստաթղթերը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերն ընդգրկում են.

- Ձեւաթուղթ I-551-ը (ներառում է մեքենայով կարդացվող ներգաղթի վիզան որ գտնվում է ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի մէջ).
- I-94 ձևը՝ ժամկետը չլրացած օտարերկրյա անձնագրով. կամ
- I-766 ձևը (աշխատանքի թույլտվություն՝ DHS-ից):

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ կանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մենք նաեւ չենք կարող ընդունել ստացագիրներ որոնք ցույց են տալիս թէ դուք սպասում եք մեր պահանջած փոստաթղթերին: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվությունը օգտագործել որպես աշխատելու իրավունք եւ ինքնությունը հաստատելու վկայություն: ***Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:***

Արդյո՞ք նախքան աշխատելը սկսելս ես պետք է ունենամ Սոցիալական ապահովության համար

Մենք չենք պահանջում, որ դուք ունենաք Սոցիալական ապահովության համար մինչեւ որ սկսեք աշխատելը, բայց Հարկային վարչությունը պահանջում է գործատուներից, որ նրանք հայտարարագրեն աշխատավարձերը, օգտագործելով Սոցիալական ապահովության համարը: Մինչ դուք սպասում եք ձեր Սոցիալական ապահովության համարի ստանալուն, ձեր գործատուները կարող են օգտագործել մեր կողմից տրված նամակը, որում նշվում է, որ դուք դիմել եք համար ստանալու նպատակով: Ձեր գործատուն կարող է օգտագործել ձեր ներգաղթի փաստաթղթերը որպես Միացյալ Նահանգներում ձեր աշխատելու թույլտվության վկայություն: Գործատուները կարող են գտնել լրացուցիչ տեղեկատվություն Ինտերնետում՝ ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm*** կայքում:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security **Administration**
SSA Publication No. 05-10181-AM
International Students And
Social Security Numbers(Armenian)
September 2011